600.0263.14.09.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

14 սեպտեմբերի 2016 թվականի №263Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի №736Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՍԵԿՏՈՐ ՔՎԱՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2016 թվականի մայիսի 30-ի և օգոստոսի 29-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի դեկտեմբերի 29-ի «ՍԵԿՏՈՐ ՔՎԱՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Զորագյուղ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №736Ա որոշման՝

   1) 1-ին կետում «Զորագյուղ համայնքի ոռոգման ջրատարի վրա կառուցված «Զորագյուղ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում» բառերը փոխարինել «Զորագյուղ համայնքի վարչական տարածքում՝ Զորագյուղ գետի անանուն վտակի վրա կառուցված «Զորագյուղ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում (բնական ջրահոսք)» բառերով.

   2) 2-րդ կետով հաստատված «ՍԵԿՏՈՐ ՔՎԱՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Զորագյուղ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում

էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0307 լիցենզիայի պայմանների՝

ա. 3-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) 2015 թվականի դեկտեմբերի 23-ից մինչև 2016 թվականի սեպտեմբերի 14-ը վերակառուցման ժամանակահատվածն է,»,

բ. 5-րդ, 6-րդ և 9-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զորագյուղ համայնքն է՝ Զորագյուղ գետի անանուն վտակի վրա (բնական ջրահոսք):

6. Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է 530 կՎտ հաշվարկային հզորությամբ «Զորագյուղ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:»,

«9. «Զորագյուղ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 530 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

3) հիդրոտուրբին №1՝ ՇՇ 300-Հ2-40, 300 կՎտ, 2008թ,
4) գեներատոր №1՝ ԱԳ 400,400,50S4, 280 կՎտ, 2010թ,
5) հիդրոտուրբին №2՝ ՇՇ 300-Հ2-70, 300 կՎտ, 2008թ,
6) գեներատոր №2՝ ԱԳ 400,400,50S4, 250 կՎտ, 2008թ:»:

2. «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել «Մարտունի» մասնաճյուղի 2015 թվականի դեկտեմբերի 16-ի №ՎԲ02/156 գրությամբ ներկայացված բանկային երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև «Զորագյուղ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի վերակառուցման համար ստանձնած հինգ հարյուր հազար դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
14 սեպտեմբերի 2016թ.
ժամը 16[00]